

VO ԿԱՂԱՊԱՐՈՒՄՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ABSTRACT ON THE WORD ORDER OF VO IN ENGLISH AND ARMENIAN

It's well- acknowledged that common typological features of languages are determined by their structural and syntactic traits. Already in the 50's of the last century the smallest syntactic unit (word combination) became an object for typological studies. The relations reigning in the model "subject-predicate-object" and their patterning in various languages – analyzed. In the frame of this article an attempt is made to define VO (predicate + object) modeling in English and Armenian, their universals and typological traits.

The cases of preposition and postposition of direct and indirect object in relation to the verb are introduced.

The study of factual material reveals also very specific cases for typological study.

Key words: *word–order, preposition, postposition, universal, typological trait, modeling.*

РЕЗЮМЕ К ВОПРОСУ О ПОРЯДКЕ VO (на материале английского и армянского языков)

Известно, что общие и типологические особенности языков определяются их структурными и синтаксическими характеристиками. Еще в 50-ые годы прошлого столетия минимальные синтаксические единицы – словосочетания – впервые стали объектом типологических исследований.

Предметом исследования стали модели «подлежащее – сказуемое – дополнение» и способы их реализации в разных языках.

В рамках данной статьи делается попытка определить типы моделирования VO в английском и армянском языках. Выявляются как их универсальные, так и типологические особенности. Даются случаи препозиции и постпозиции прямых и косвенных дополнений в сопоставляемых языках.

Анализ фактического материала выявил примеры моделирования, представляющие особый интерес для типологии.

Ключевые слова: *порядок слов, универсалии, препозиция, постпозиция, типологические характеристики, моделирование.*

ԱՄՓՈՓՈՒՄ

Անհերքելի ճշմարտություն է, որ լեզուների ընդհանուր տիպաբանական առանձնահատկությունները որոշարկվում են ինչպես նրանց կառուցվածքային, այնպես էլ շարադասական-շարահյուսական բնութագրերով:

Դեռևս անցյալ դարի 50-ականներին շարահյուսական նվազագույն միավորները (բառակապակցությունները) առաջին անգամ դարձան տիպաբանական վերլուծության առարկա: Քննության ենթարկվեցին այն հարաբերությունների բնույթը, որոնք իշխում են ենթակա- ստորոգյալ- խնդիր եռանդամ կառույցի ներսում և դրանց կաղապարումները տարբեր լեզուներում:

Սույն հոդվածի շրջանակներում փորձ է արվում որոշարկել ՎՕ (ստորոգյալ+խնդիր) կապակցելիության եղանակները անգլերենում և հայերենում, սահմանվում են ընդհանուր տիպաբանական առանձնահատկությունները՝ հայերենի հարաբերմամբ: Տրվում են ուղղակի և անուղղակի խնդիրների նախադաս կամ ետադաս շարադասության դեպքերը բայի հարաբերմամբ: Փաստացի նյութի քննությունը ցույց է տալիս, որ բացի շարադասության ընդհանուր դեպքերից, որոնք օրինաչափ են լեզուների համար, դիտվում են նմանապես հետաքրքրական կաղապարումներ, որոնք խիստ կարևոր են տիպաբանական վերլուծությունների համար:

Բանալի բառեր՝ *շարադասություն, նախադաս և ետադաս դասավորվածություն, ընդհանրույթ, տիպաբանական առանձնահատկություն, կաղապարում:*

«Նախադասությունները իրենց կառուցվածքով հասնում են այնպիսի բարդության, տարբեր մասերի և անդամների շղթայակազման այնպիսի նրբության, որ դա կարելի է համարել լեզվական մշակույթի խոշորագույն նվաճումներից մեկը» (Առաքելյան Վ., 1958):

Ահա թե ինչու նախադասությունը, որպես լեզվամշակութային իրողություն, հաճախ է հայտնվում տիպաբանական վերլուծությունների կիզակետում: Իսկ այս դեպքում մեզ հետաքրքրում է նախադասության շրջանակներում ստորոգյալ-խնդիր հարաբերակցումը: Ինչպիսի՞ լեզվական կաղապարումներով են իրացվում ստորոգյալը և խնդիրը գուցադրվող լեզուներում և ինչպիսի՞ն է նրանց շարադասությունը:

Առաջադրված նպատակը որոշարկում է հետազոտության մեթոդաբանությունը: Ելակետային ենք համարել չափանմուշային սկզբունքը: Եվ այս ընտրությունը խիստ արդարացված է, քանի որ մեր դեպքում անզլերենի տիպաբանական առանձնահատկությունները սահմանվում են մեկ այլ լեզվի՝ հայերենի տիպաբանական յուրահատկությունների նկարագրմամբ:

Անհերքելի ճշմարտություն է, որ լեզուների ընդհանուր տիպաբանական առանձնահատկությունները որոշարկվում են ինչպես նրանց կառուցվածքային, այնպես էլ շարադասական – շարահյուսական բնութագրերով:

Շարահյուսական նվազագույն միավորները՝ բառակապակցությունները, առաջին անգամ հետաքրքրության առարկա են դարձել անցյալ դարի 50-ականներին ֆրանսիացի լեզվաբան Լ. Տենիերի կողմից, ով առավելապես հետաքրքրված էր անվանական *ածական+գոյական* կապակցության լեզվական հնարավոր իրացումներով: Ավելի ուշ ամերիկացի լեզվաբան Ջ. Գրինբերգը ընդլայնեց հետազոտության այս շրջանակը և առաջարկեց շարահյուսական մակարդակի համար տիպաբանական վերլուծության նոր սկզբունք: Ըստ այս սկզբունքի՝ տիպաբանական առանձնահատկությունների սահմանման համար անհրաժեշտ է ուսումնասիրել այն հարաբերությունները, որոնք իշխում են ենթակա-բայ-խնդիր (SVO) եռանդամ կառույցի ներսում: Լեզվաբանի դիտարկմամբ ենթակա-բայ (ստորոգյալ) կառույցն իրացվում է լեզուներում՝ VSO, VOS, OVS, OSV, SVO բանաձևումներով, որոնցից առավել տարածված են SVO և VOS կաղապարները:

Լեզվաբանի դիտարկումները բացահայտեցին մեկ շատ կարևոր օրինաչափություն. Եթե այս եռանդամ կառույցում առանձնացնենք ենթակա-խնդիր օղակը (SO), ապա քննության առնված լեզուներում ենթական 96% հարաբերակցությամբ նախորդում է խնդրին: Եվ սա ունի իր տրամաբանական մեկնությունը. «...քանի որ ենթական նախադասության այն անդամն է, որից գլխավորապես սերվում է գործողությունը, մինչդեռ խնդիրը այն անդամն է, որ կրում է իր վրա այս գործողությունը» (Comrie 1981):

Չ. Գրինբերգի լեզվական ընդհանրությունների տեսությունը իր տրամաբանական զարգացումը գտավ Վ. Լեհմանի աշխատություններում: Գրինբերգի եռանդամ շարահյուսական կառույցը փոխարինվեց Լեհմանի տեսություններում երկանդամությամբ, որում բանաձևվում է ստորոցյալ-խնդիր (VO) հարաբերությունը իր հնարավոր լեզվական բոլոր կադապարումներով տարբեր լեզուներում: Ըստ լեզվաբանի առաջադրած վարկածի՝ այն լեզուներում, որտեղ գերիշխում է VO հաջորդականությունը, կարելի է ենթադրել, որ նմանատիպ լեզուներում գոյականը միշտ նախադաս է ածականի (որոշի) հարաբերմամբ, սեռական որոշիչը հաջորդում է գոյականին, ժխտական ցուցիչը դրվում է բայից առաջ և այլն: Իսկ ինչ վերաբերում է բառակազմական հնարավոր միջոցներին, ապա այս կառուցվածքային տիպաբանությամբ լեզուներում առավելապես կենսունակ է նախաձանցումը: Մինչդեռ OV շարահաստությամբ լեզուներում բառակազմական միջոցներից առավելապես կենսունակ է վերջածանցումը, ածականը (որոշիչը) և սեռական որոշիչը նախադաս դիրքում են գոյականի հարաբերմամբ, մակբայը նախորդում է բային և այլն:

Թերևս Լեհմանի տեսությունը նախադասության նվազագույն անդամի տիպաբանության վերաբերյալ կարելի է ընդունել միայն որպես վարկած, քանի որ առաջադրված համամասնությունը խախտվում է, նույնիսկ եթե փորձենք այն կիրառել մեկ լեզվի շարահյուսական նվազագույնի քննության ժամանակ: Այսպես օրինակ՝ եթե ելնենք անգլերենի կառուցվածքից, ապա նրան հիմնականում բնորոշ է VO դիրքային

դասավորվածությունը: Սակայն սրան զուգահեռ անգլերենին օրինաչափ է ածականի ետադաս շարադասությունը, սեռական որոշիչ շարասությունը գոյականից հետո (the house of John):

Անգլերենի լեզվական համակարգը հարուստ է բազմագործառության ճիշտ նախադասություններով, և լեզվում շատ կենսունակ է վերջածանցումը. լեզվական իրողություններ, որոնք օրինաչափ են OV կառուցվածքայնությամբ լեզուներին և բնորոշ չեն VO տիպաբանությամբ լեզուներին: Ասվածից հետևում է, որ անգլերենում հատկապես կիրառելի են VO և OV բանաձևումները: Եվ երկրորդ, Լեհմանի տեսությունում, ըստ մեզ, հիմնավորում չի ստանում մի շատ կարևոր հարցադրում՝ ինչ սկզբունքայնությամբ է հարաբերվում VO բայական դիրքային հաջորդականությունը, ասենք, անվանական (ածական+գոյական) կառույցի շարադասության կամ նախածանցման հետ: Այնուհանդերձ, Լեհմանի տեսությունը, շարահյուսական երկանդամ նվազագույնի մասին, ընդունվեց Ա. Հոկինսի և Թ. Վենեմանի կողմից, սակայն որոշակի վերապահումով: Ըստ լեզվաբանի՝ երկբաղադրիչ անդամների հարաբերակցության բնույթը սահմանվում է բոլորովին այլ սկզբունքայնությամբ՝ գերադաս անդամների դիրքային հաջորդականության բնույթով: Ուղղորդվելով այս սկզբունքայնությամբ՝ նա լեզուները բաժանում է երկու խմբի՝ 1. լեզուներ, որոնցում շարահյուսական նվազագույն միավորը բանաձևում է գլխավոր անդամ – ստորադաս անդամ (head-dependent) հարաբերությամբ, 2. լեզուներ, որոնցում բառակապակցությունը կադապարվում է ստորադաս-գլխավոր (dependent-head) իրացմամբ: Քանի որ անվանական երկանդամ կառույցի տիպաբանական առանձնահատկությունը որոշարկվում է նրա բաղադրիչների գերադաս կամ ստորադաս դիրքային հաջորդականությամբ, ուստի և այս տրամաբանությամբ էլ բացատրվում են ստորոգյալ-խնդիր (VO) և խնդիր-ստորոգյալ (VO) բայական կապակցության շարադասության տիպաբանությունը:

Ձ. Հոկինսը համակարծիք է Թ. Վենեմանի գլխավոր-ստորադաս երկբաղադրիչ կապակցության բանաձևմանը, սակայն ըստ լեզվաբանի, այս կադապարումը լիարժեքորեն չի բացահայտում շարահյուսական

միավորների դիրքային հաջորդականությունը և ուստի խոսում է շարահյուսական նվազագույն միավորի մեկ այլ տիպաբանական օրինաչափության՝ *ներդաշնակության մասին (harmony)*։ Ըստ այս սկզբունքի՝ գոյություն ունի օրինաչափություն (համահունչություն) բայական և անվանական կաղապարումների միջև բոլոր լեզուներում, որով էլ սահմանվում են լեզուների տիպաբանական առանձնահատկությունները։ Այսպես՝ եթե անվանական կապակցությունում ստորադաս անդամները շարադասվում են գերադասից առաջ, ապա բայական կառույցներում նույնպես բայական անդամները (խնդիր, մակբայ և այլն) ունենում են նախադաս շարադասություն բայի հարաբերմամբ։ Ըստ մեզ՝ այս սկզբունքն ևս չի կարող ընդունվել որպես բացարձակ ընդհանրույթ տիպաբանական առանձնահատկությունների որոշարկման համար, քանի որ նախ՝ ամեն մի լեզու ցուցաբերում է խառը տիպի դասավորվածություն՝ կաղապարի գերակշռությամբ և երկրորդ՝ այս օրինաչափությունը կարող է չիրացվել նույնիսկ միևնույն լեզվում միևնույն կապակցության սահմաններում։ Այսպես օրինակ՝ եթե փորձենք տարրորոշել անդամների կապակցման բնույթը մի շատ պարզ նախդրավոր կապակցությունում, ինչպիսին է *impressions about the film*, ապա այս դեպքում չենք կարող սոսկ սահմանափակվել *impressions (գերադաս) -about the film (ստորադաս)* երկանդամ բաղադրմամբ, քանի որ *about the film*՝ նախդրավոր կապակցության ծայքերում գործում է ևս մի այլ բանաձևում (*about-the film*) իրեն բնորոշ ներքին կանոնակարգվածությամբ։

Առավել հետաքրքրական և կարևոր է տիպաբանական ուսումնասիրությունների համար ոչ միայն շարահյուսական նվազագույնի անդամների շարադասության քննությունը, այլ նաև հնարավոր ներթափանցումները այս կառույցի դաշտ, որ գիտական գրականությունում ստացել է «շրջանակային կառույց» անվանումը։ Տվյալ դեպքում շարահյուսական ամբողջականությունը խախտվում է, թուլանում և շրջանակից դուրս գտնվող նախադասության մյուս անդամները ներթափանցում են ուրվագծված սահմաններից ներս՝ խախտելով կառույցի համամասնությունը։ Մրա արդյունքում կաղապարի անդամները փոխում են իրենց

շարադասությունը՝ ներթափանցած միավորների դիրքային հաջորդականությունը կանոնակարգելու համար:

Եվ ինչպես նկատում է Յու. Գաբրիելյանը, այսպիսի փոփոխությունները կատարվում են, երբ «շրջանակային կառույցը սովորականից ավելի է ծավալվում և դրա սահմանները աղոտանում են» (Յու. Գաբրիելյան, 2006):

Հնարավոր ներթափանցումները կարող են տեղ գտնել ինչպես անվանական կառույցներում (ներթափանցում հողի և գոյականի միջև, ներթափանցում նախադասության շաղկապների հարաբերական դերանունների միջև և այլն), այնպես էլ բայական կառույցներում:

Մեր վերլուծության արդյունքում դուրս բերվեցին հնարավոր այն կաղապարումները, որոնցով բանաձևվում է բայ-ստորոգյալ հարաբերությունը գուգադրվող լեզուներում:

Անգլերենում ուղղակի խնդիրը անմիջապես շարադասվում է անցողիկ բայերից հետո, եթե տվյալ նախադասության շրջանակներում բացակայում է անուղղակի խնդիրը:

He had found a few precious moments to make notes in his sermon notebook (Jan Karo ,These High, Green Hills, 1996, p. 86).

He had paid Fancy and reeled out of her shop. (Jan Karo ,These High, Green Hills, 1996, p. 89).

Այն դեպքում, երբ ուղղակի խնդիրը շեշտվում է, այն ստանում է նախադաս շարադասություն.

Goodbyes were said, hugs were given out, and everyone shook the hand of the rector and his new wife, thanking them for a fine Feast (Jan Karo, These High, Green Hills, 1996, p. 46).

Նշենք, որ անցողիկ բայերի թիվը անգլերենում հարաբերականորեն մեծ է, քան հայերենում, քանի որ միջին և նոր անգլերենի շրջանում դիտվեց բայի խոնարհման համակարգի պարզեցում՝ բայական վերջավորությունների կորուստ:

Անգլերենում գործում է երկդիմի բայերի մի խումբ, որոնք կարող են կապակցվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի խնդրի հետ, ինչպես օրինակ՝

They took me to the zoo, they gave me a pony, they built me a tree house (Jan Karo, These High, Green Hills, 1996, p. 219).

Եթե միննույն նախադասության սահմաններում առկա է ն՛ ուղղակի, ն՛ անուղղակի խնդիր, ապա անգլերենում օրինաչափ է անուղղակի խնդրի շարադասումը բայական ստորոգյալից հետո, որին էլ անմիջապես հաջորդում է ուղղակի խնդիրը:

Rody Kickham held the bell by its greasy lace. A fellow asked him to give it one last: but he walked on without even answering the fellow. (James J. A Portrait of the Artist as a Young Man. New York, 1916).

Սակայն ուղղակի խնդրի նախադաս դիրքում հայտնությունը պահանջում է, որ անուղղակի խնդիրը կապակցվի նախդիրների հետ, որոնցից անգլերենում առավել գործածական են to և for նախդիրները:

“Let us make one point, that we meet each other smile, when it is difficult to smile. Smile at each other, make time for each other in your family.” <https://www.goodreads.com/quotes/102109-let-us-make-one-point-that-we-meet-each-pther>.

The president promised the end of racial discrimination, but he rejected the black demand for one man, one vote. <https://www.google.am/search?hl=hy&tbm=bks&q=isbon:1317518594>.

Տիպաբանական մեծ արժևորում ունեն it դերանվամբ կադապարվող խնդիրները, որոնցում it դերանունը նշույթազրկվելով կատարում է ձևական խնդրի գործառույթ: Այս ինքնատիպ դերակատարմամբ it դերանունը կարող է շարադասվել անցողիկ և անանցողիկ բայերից հետո:

“I like it here, it’s quiet, you see the ocean, it’s different every day, it’s beautiful. <https://www.collinsdictionary/English-italian/i-like-it-s-quiet>.

To her husband’s assurance that they were not going to spend long in Southern Dobruja, she replies.” I like it here. (Dumitriu P. An Unforgettable Summer. Romania, 1994).

Սակայն որոշ դեպքերում, ի տարբերություն վերոնշյալ նախադասությունների, որոնցում բացակայում է նյութական խնդիրը, տրամա-

բանական խնդիրը բանաձևվում է անորոշ դերբայով, գերունդով կամ էլ երկրորդական նախադասությամբ, ինչպես ներքոհիշյալ օրինակում՝

I like it that your lack of concern is my fault. //www.brainyquote.com/quotes/mat Cameron 333397.

Անգլերենին շատ հատուկ է ինքնատիպ խնդրի մի տեսակ, որում բայն ու գոյականը սերված են նույն արմատից, ինչպես օրինակ՝ live a life, sleep a sleep, fight a fight, dream a dream և այլն:

I dreamed a dream in time gone by, When hope was high. And life worth living. http://slideplayer.com/slide/4470174/.

Be brave enough to live life creatively. The creative place where no one else has ever been. //www.brainyquote.com/quotes/mat Cameron 333397.

Հայերենում առավել գործածական են հետևյալ բանաձևումները.

Սովորական շարադասությամբ խնդիրը ընկնում է ստորոգյալից հետո:

Օրինակ՝

Բայց ամենահետաքրքիրն այն էր, որ Ջոնն այդ աչքերի մեջ կարողում էր նաև ազնվություն և պարկեշտություն: Վեպ (Ա. Ճաղարյան-Եր.: 2007, էջ 36):

Ուղիղ խնդիրը ստորոգյալից առաջ է շարադասվում, այն է, երբ առանձնապես շեշտվում է:

Օրինակ՝

Քար են շրջել. Սար են շարժել այս ձեռքերը...

Ինչեր, ինչեր, ինչեր արժեն այս ձեռքերը... (Պ. Սևակ «Մոր ձեռքերը»):

Եթե նախադասությունը ուղիղ խնդրից բացի ունի նաև տրական անուղղակի խնդիր, ուղիղ խնդիրը վերջինից հետո է դրվում:

Օրինակ՝

Ձեռքը գցեց բռնակին, սակայն միանգամից շրջվեց, մոտեցավ Անահիտին, երկար ու նուրբ համբուրեց ճակատն ու ասաց.

-Ես չգտա իմ սիրո պատասխանը (Ականատեսը: Վեպ/Ա. Ճաղարյան, Երևան: էջ 95):

Օրինակ՝

Էս հարուստը մի չլսված պայման է դնում ծառային (Թումանյան Հ. Հեքիաթներ: Եր.: Լույս 1988, էջ 15):

Մեր վերլուծության արդյունքները բերում են մեզ հետևյալ եզրահանգումներին.

- հայերենի շարադասությունը հարաբերականորեն ազատ է, մինչդեռ անգլերենում այն կայուն է: Եվ այս տիպաբանական առանձնահատկությունը որոշարկում է նմանապես ստորոգյալ-խնդիր նախադասության անդամների դասավորվածությունը,
- զուգադրվող լեզուներին բնորոշ են ինչպես VO առաջընթաց հաջորդականությունը (բայը նախորդում է խնդրին), այնպես էլ OV հետընթաց դասավորվածությանը (երբ բայը հաջորդում է խնդրին),
- դիտվեց մեկ ընդհանուր օրինաչափություն ևս՝ անուղղակի խնդիրը գլխավորապես նախորդում է ուղղակի խնդրին և անմիջականորեն հաջորդում բայ-ստորոգյալին,
- խնդիրները հայերենում արտահայտվում են հոլովական կապակցություններով, իսկ անգլերենում այն բանաձևվում է նախդրավոր կառույցներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Առաքելյան Վ.** (1958), Հայերենի շարահյուսություն, Երևան, էջ 11:
2. **Գաբրիելյան Յու.** (2006), Գերմաներեն լեզվի տիպաբանություն. Երևանի համալսարանի հրատարակչություն, էջ 91:
3. **Comrie B.**(1981), Language Universals and Linguistic Typology, p. 93.
4. **Greenberg J. H.** (1974), Language Typology: A Historical and Analytic Overview. The Hague; P.
5. **Hawkins J. A.** (1983), Word Order Universals, New York.
6. **Lehmann W.** (1978), Syntactic Typology, Austin.

7. **Vennemann Th.** (1973), Schuchazdt, The Neogrammarians and the Transformational Theory of Phonological Change, Frankfurt am Main.

Հովհաննիսյան Ա. – բ.գ.դ., պրոֆեսոր, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի վարիչ

e-mail: a_hovhannisyan@mail.ru

Ներկայացվել է խմբագրություն՝ 20.11.18, տրվել է գրախոսության՝ 02.12.18-09.12.18, երաշխավորվել է Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի կողմից, ընդունվել է տպագրության՝ 16.05.19